ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 27 » հունիս 2025թ. No 3895 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության արդյունավետության, և որակի գնահատման N 01/3054-25 առ 25.06.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վերագրանցման ընթացակարգով գրանցել թվով 2 դեղ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղդյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցամատյանում լրամշակման կատարումը՝ ավելացնելով վերագրանցման մասին տվյալները:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի վերագրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի հունիսի «27» - ի  N3895 - Ա հրամանի

# ՎԵՐԱԳՐԱՆՑՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ | Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Կապտոպրիլ | կապտոպրիլ | դեղահատեր | 50մգ; (20/2x10/) բլիստերում | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո- բալք արտադրող, որակի և բաց թողնման հսկող, ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Ռադա Պուսենյակա փ. 10, Լյուտոմեր, 9240, Սլովենիա- փաթեթավորող | Սլովենիա | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | Դ | 23167 25.06.2025 | 30.12.2025 |
| 2 | Ֆուկորցին | ռեզորցին | լուծույթ արտաքին կիրառման | 78մգ/մլ; 10մլ ապակե 22իկ, 15մլ ապակե 22իկ, 25մլ ապակե 22իկ, 30մլ ապակե 22իկ | Արսանիտ ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս– Ռանչպար խճուղի թիվ 7 | Հայաստանի Հանրապետություն | Արսանիտ ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս– Ռանչպար խճուղի թիվ 7 | Հայաստանի Հանրապետություն | ԱԴ | 23168 25.06.2025 | 19.06.2024 |